ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«____» _____ 2010թ. N _____Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 15-րդ մասին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

Համաձայնություն տալ Երևանի քաղաքապետի 2010 թվականի մայիսի 11-ի ««Կենտրոն-Մաքրություն» փակ բաժնետիրական ընկերության նոր խմբագրությամբ կանոնադրությունը, կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» հ.1832-Ա, մայիսի 14-ի ««Մաքուր-Աջափնյակ» փակ բաժնետիրական ընկերության նոր խմբագրությամբ կանոնադրությունը, կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» հ.1890-Ա, մայիսի 26-ի ««Աջափնյակ-վերելակ» փակ բաժնետիրական ընկերության նոր խմբագրությամբ կանոնադրությունը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» հ.2064-Ա, ««Ք.Երևանի Դավթաշեն համայնքի բնակֆոնդի և կոմունալ տնտեսության» փակ բաժնետիրական ընկերության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» հ.2066-Ա, մայիսի 27-ի «Երևանի ենթակայության մի շարք ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակները, հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը և կառուցվածքը հաստատելու մասին» հ.2121-Ա, հունիսի 2-ի ««Հայ-Արտ» մշակութային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության նոր խմբագրությամբ կանոնադրությունը, կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» հ.2130-Ա, «Մալաթիա-Սեբաստիա թաղային համայնքի «Կռունկ» փակ բաժնետիրական ընկերության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» հ.2131-Ա, ««Արաբկիր-Սերվիս» փակ բաժնետիրական ընկերության նոր խմբագրությամբ կանոնադրությունը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին»

հ.2132-Ա, հունիսի 3-ի «Երևանի Նորք-Մարաշ թաղային համայնքի «Կանաչ Բարձրունք», «Քանաքեռ-Զեյթուն համայնքի «Սան-մաքրում», «Նուբարաշեն թաղային համայնքի «Նուբարաշեն» փակ բաժնետիրական ընկերությունների և «Նոր Նորք համայնքի համատիրությունների աշխատանքները համակարգող» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» հ.2151-Ա, «Արաբկիր համայնքի «Նոր Արաբկիր» փակ բաժնետիրական ընկերության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» հ.2152-Ա, «Մալաթիա-Սեբաստիա համայնքի «Վերելակ» փակ բաժնետիրական ընկերության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» հ.2153-Ա որոշումներին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվի առնելով, որ <<Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 110-րդ հոդվածի համաձայն Երևանի թաղային համայնքների սեփականություն համարվող գոյքը փոխանցվել է Երևան համայնքին, ինչպես նաև Երևան քաղաքի ավագանու 09.02.2010թ. հ.61-Ա որոշումը, համաձայն որի Երևան համայնքին փոխանցված մի շարք առևտրային կազմակերպություններն անվանափոխվել են, ուստի անհրաժեշտություն է առաջացել Երևան համայնքին փոխանցված և Երևանի նախկին թաղային համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների կանոնադրություններում կատարել փոփոխություններ, հաստատել դրանց հաստիքացուցակները, աշխատակիցների թվաքանակները կառուցվածքը և պաշտոնային դրույքաչափերը՝ այն համապատասխանեցնելով գործող օրենսդրության պահանջներին, որի արդյունքում կայացվել են Երևանի քաղաքապետի 2010 թվականի մայիսի 11-ի հ.1832-Ա, մայիսի 14-ի հ.1890-Ա, մայիսի 26-ի հ.2064-Ա, հ.2066-Ա, մայիսի 27-ի հ.2121-Ա, հունիսի 2-ի հ.2130-Ա, հ.2131-Ա, հ.2132-Ա, հունիսի 3-ի հ.2151-Ա, հ.2152-Ա, հ.2153-Ա որոշումները:
<<Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 15-րդ մասի պահանջներից ելնելով՝ նախապատրաստվել է «Երևանի քաղաքապետի մի շարք որոշումներին համաձայնություն տալու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծ:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի քաղաքապետի մի շարք որոշումներին համաձայնություն տալու մասին» որոշման ընդունման առնչությամբ այլ որոշումների ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Գ.ԲԵԳԼԱՐՅԱՆ